ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894, Էլ. Փոստ
cityvayk@gmail.com

18 սեպտեմբեր 2025թ.
N 1027

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ
ԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Ծանուցում
«ՎՀ-ԳՀԱՇՁԲ-25/1» ծածկագրով Պայմանագիրը
Մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի գործընկեր՝

Վայոց Ձորի մարզի Վայքի համայնքապետարանի և ԱՁ Անի Սահակյանի միջև 2025թ.-ի հուլիսի 17-ին կնքվել է Վայքի համայնքապետարանի կարիքների համար թիվ «ՎՀ-ԳՀԱՇՁԲ-25/1» ծածկագրով աշխատանքների կատարման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն Կատարողը ստանձնում է կատարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված աշխատանքները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալու հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից հաշված 60 օրացուցային օրը՝ 2025թ.-ի սեպտեմբերի 17-ը: Առաջարկվում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2025թ. սեպտեմբերի 25-ը ժամը 18:00-ն ներառյալ) կատարել պայմանագրային պարտավորությունները, այլապես Վայքի համայնքապետարանի կողմից կձեռնարկվի պայմանագիրը միակողմանի լուծման գործընթաց:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. Պարբերության «Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...» Առաջարկվում է պայմանագիրը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 5 օրվա ընթացքում Վայքի համայնքապետարանի 900345101407 հաշվեհամարին վճարել որակավորման ապահովման՝ 83700 /ութսուներեք հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման 55800 /հիսունհինգ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ գումարները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին ԱՁ Անի Սահակյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց սկսելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝
Ֆինանսատնտեսագիտական,եկամուտների հաշվառման
և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-գնումների գծով
Ա. Գեվորգյան 093-30-27-42